

Քաղաքաշինության և Ճարտարապետության բնագավառի մասին

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱՔԻԾ

Գլուխ I

Նպատակը

-«Մեր փոքր հողակտոր Հայրենիքում ամեն մի կառույց պիտի ունենա գեղարվեստական արժեք: Մենք ճարտարապետներս, իրավունք չունենք սխալների»
(մեջբերում Ռ. Իսրայելյանից):

-Ապագա ճարտարապետների սերունդներին թողնել այնպիսի մասնագիտական օրինավոր դաշտ, որտեղ բնատուր, շնորհալի մասնագետերը իրենց ներուժը կձառաեցնեն Հայրենիքի ծաղկմանը:

Հոդված 1

Սույն օրինագիծը կոչված է կարգավորել Քաղաքաշինության և Ճարտարապետության բնագավառի իրավական փոխհարաբերությունները և աշխատակարգը:

Հոդված 2

Սույն օրենքում օգտագործվող հասկացություններ են

- Ճարտարապետական խորհուրդ (ՃԽ)
- Ճարտարապետների միություն (ՃՄ)
- Լիցենզավորված ճարտարապետ (Լ)

Գլուխ II

Հայաստանի Ճարտարապետների խորհրդի գործունեության ոլորտ

-Ճարտարապետների Խորհորդը (ստորն ճԽ)-ը կազմվում է բաժրագույն կրթություն ստացած ճարտարապետների կողմից, փակ ընտրությունների (մեկ ամսվա ընթացքում), ռեյտինգային ցուցակի շնորհիվ, 2 տարվա կտրվածքով (15 հոգուց բաղկացած –3 բաժիններով):

Դրանք էն

1. քաղաքաշինություն,
2. ծավալաշինություն,բարեկարգում
3. վերականգնություն (այդ թվում Հուշարձանների):

-ՃԽ-ի ֆունկցիաներն են

1. Լիցենզավորման թույլատվություն և Լիցենզավորման կասեցում (14+1 սկզբունքով)

Լիցենզավորման կարգը

– 3 ճարտարապետ– հովանավորի նամակ (երիտճարտ–ի համար –դասախոսներից)

– կլաուզորա– ազատ թեմայով ձեռքի աշխատանք տեղում

– հարցազրույց հայացքների վերաբերյալ (հետագայում–տեստաթերթ)

–նախագծերի ցուցադրում (մրցույթային նախաքծերի 1–2–3 մրցանակների առավելություն)

– լիցենզավորման կարգավիճակ (1–Քաղաքաշինական Գործունեության*,

2–ծավալաշինության, 3– ծավալաշինության, վերակառուցում ու դիզայն, 4–դիզայն**, 5–հուշարձանների վերակառուցում, 6–հրատարակչական գործունեություն, 7–շենք շինությունների էքսպերտիզա***, 8–անհատական կոնստրուկտորի գործունեություն ****)

* - Քաղաքների, Ավանների, Գյուղերի գլխավոր Հատակագծեր (պատվիրատուն- պետության հետ համատեղ)

** –դիզայներների համար, հիմնապատերի քանդման դեպքում ետ է վերցվում լիցենզիան

*** - տրվում է կազմակերպությանը Համապատ. Սարքավորումների դեպքում

**** - տրվում է մասնագետին 3 հովանավորչական նամակի հիման վրա (1 ճարտ+2 կոնստրուկտոր)

Փակ քվեարկություն ՃՄ անդամների կողմից

-Մասնագիտական հանդիպումների կազմակերպում

2. Քաղաքաշինության և ճարտարապետության կոմիտեի նախագահի թեկնածության առաջադրում (ստորն ՔՃԿՆ)

ՃԽ-ի կողմից ներկայացվում է 2 թեկնածու, առաջարկ ՀՀ կառավարությանը- 2 տարի ժամկետով (ՔՃԿ-ի կազմը + 5 հոգի ամեն ոլորտի +իրավաբան+հաշվապահ+մրցութային նյութերի պատրաստողներ-2 հոգի: ՃԽ-ն իրավասու է ետ կանչել ՔՃԿ նախագահին ՃԽ-ի անդամների ձայների մեծամասնության պահանջով (6+1): ՔՃԿՆ-ը կարող է ընտրվել նույն պաշտոնում ոչ ավելի քան 2 անգամ: ՔՃԿՆ-ն հաշվետու է ՃԽ-ին նաև: ՔՃԿ-ն Ֆինանսավորվում է ՀՀ Կառավարության կողմից:

ՔՃԿՆ –ի Գործունեության շրջանակ

-փոհարաբերություններ պետ մարմինների և ՃԽ-ի (քաղշին հարցերի շուրջ-գենպլան քաղաքի, ավանի...) հետ: Նորմատիվային փաստաթղթերի ակտուալացում-քննարկում ՃԽ-ում և Կառավարությունում:

- Քաղաքաշինության և ճարտարապետության կոմիտեի նախագահը չի կարող լինել ՃԽ-ի անդամ միաժամանակ:

Փակ քվեարկություն (14+1 սկզբունքով)

2* Շրջանների Գլխավոր Ճարտարապետի թեկնածության առաջադրում (ստորն ՇԳՃ) ՃԽ-ի կողմից ներկայացվում է 1-2 թեկնածու, 2 տարի ժամկետով, առաջարկ ՀՀ կառավարության առնթեր տեղական կառավարման նախարարությանը:

ՇԳՃ –ի Գործունեության շրջանակ

-փոհարաբերություններ պետ մարմինների և ՔՃԿ-ի (քաղշին հարցերի շուրջ-գենպլան քաղաքի,ավանի...) հետ: ՃԽ-ն իրավասու է ետ կանչել թեկնածուին ՃԽ ձայների մեծամասնության պահանջով: ԳՃ-ն կարող է ընտրվել նույն պաշտոնում ոչ ավելի քան 2 անգամ: ԳՃ-ն հաշվետու է ՃԽ-ն նաև: ԳՃ-ն կարող է ընտրվել ու նշանակել իր շրջանի գլխավոր դիզայներին:

-Շրջանի Գլխավոր Ճարտարապետը չի կարող լինել ՃԽ-ի անդամ միաժամանակ:

Փակ քվեարկություն (14+1 սկզբունքով)

-ՔՃԿ-ի և ՇԳՃ-ների գործունեությունը - փոհարաբերություններ պետ մարմինների հետ

- ՔՃԿ-ի և ՇԳՃ -ի Պետ Պատվերների Տեխ առաջադրանքին պայմանագրերի պատրաստում,

-Պետ Նորմատիվային փաստաթղթերի պատրաստում, ակտուալացում-քննարկում ճխում- երկկողմանի Հաստատում

-Հողահատկացումներին Հողերի նշանակության փոփոխման իրավասություն - կորդինացիոն համակարգի պատասխանատու

3. Շենք-շինությունների Նախագծերի տեխնիկական առաջադրանքների հաստատում և վերջնահաստատում մրցույթից հետո (վերակառուցման դեպքում էքսպերտիզայի եզրակացություն) (ներկայացվում է պատվիրատուի և կապալառուի (միջնորդ-նախաձեռնող) կողմից (կարող է լինել ՈՁ լիցենզավորված-менеджер-Նախաձեռնող) (նախագծման արժեքի հաշվարկների հիմք ընդունել MPP3.2.06.08-13, կամ Պայմանագրի ներկայացման դեպքում-]N°?-10%ի իջեցում)

4. Մրցույթային ժյուրիների ընտրության կազմակերպում ԻՆԵՏ կայքով (ՃԽ-ի կողմից առաջարկված ցանկից-օրինակ 20ից - 5-7-9 և այլն կարող են ընտրել բոլոր Ճ-ները-ժյուրիի ցանկը կցվում է Մրցույթի փաթեթին) (ֆիքսված վճար ժյուրիի անդամներին մրցույթի գումարից) (ինքնաբացարկ ժյուրիի անդամի կողմից-չկատարելու դեպքում-տուգանք ժյուրիի անդամ-մասնակցին)

- Նախագծման արժեքից 10%-ի գանձում (ՃԽ հաշվեհամարին) (+2% ՃՄ հաշվեհամարին) (+18% ԱԱՀ պետական տուրք-Պայմանագրային արժեքին ավելացվում է+18%ԱԱՀ)

- ՃԽ-ը մասամբ Սուբսիդավորվում է պետության կողմից:

5. ՃԽ-ը մինչև 500 մք մակերես ունեցող կառուցվող օբյեկտների (ռեկոնստրուկցիա, բարեկարգում) մրցույթի կազմակերպում

-ՃԽ-ում, մրցույթային գրասենյակով (գրասենյակը պիտի ունենա տիպային ձևեր, ճկուն աշխատաձև-կայքով նախագծեր ստանալու հնարավորություն-տպել-ներկայացնել- ԻՆԵՏ կայք+5հոգի)

-Մրցայթային նյութերի մատուցումը ստանդարտ չափի մեջ-A2 ֆորմատ (կամA3x2) - էսքիզներ ձեռքով կամ ծրագրային (առավելությունը տալ ձեռքի աշխատանքին) - 3

տարբերակներ ըստ մրցույթի արդյունքների - կամ 1 հոգու կողմից 3 տարբերակներ:
Կնքվում է պայմանագիր:

- +Բուկլետ տեխ տվյալներով-ընտրած տարբերակի սեփականության իրավունքի ֆիքսում- անհրաժեշտության դեպքում Լիցենզավորում:

- Ժուրիի կազմում չեն կարող ընդգրկվել մասնակիցները:

- Էսքիզային փուլի արժեքը պետք է կազմի ընդհանուր նախագծման արժեքի 30-40% +18% ԱԱՀ (ԱԱՀ-ն փոխանցվում է միանվագ) (հաշվարկային ստանդարտից ոչ պակաս 10%):

-Աշխատանքային նախագիծը կարող է կատարել լիցենզավորված յուրաքանչյուր կազմակերպություն (առաջնահերթությունը տրվում է նախաձեռնողին-շտամպում- նախաձեռնող, երկրորդը - հեղինակին-շտամպում-հեղինակ ճարտարապետ, տիպային պայմանագրի հիման վրա):

-Աշխատանքային նախագծման փուլի արժեքը պետք է կազմի ընդհանուր նախագծման արժեքի 60-70%:

-Նախաքճի լիարժեք կատարման պատասխանատվությունը դրվում է նախաձեռնողի վրա:

-Նախագծի էքսպերտիզա կարող է կատարվել լիցենզավորված անհատական էքսպերտ կազմակերպությունը: Էքսպերտ կազմակերպության որոշման Հիման վրա ՃԽՆ տալիս է Շինարարության Թույլատվություն:

-Հեղինակային Իրավունքի Իրականացումը Պատկանում է Միայն Հեղինակին կամ նրա կողմից նշանակված անձին, միակողմանի կամ պայմանագրով պատվիրատուի հետ: Երկու դեպքում էլ Հեղինակը դիմումի հիման վրա, ներկայացված ՃԽ, կարող է կանգնեցնել շինարարությունը: ՃԽ-ի հաստատված որոշումը Հիմք է, դիմելու ոստիկանության կարգապահ մարմիններին, որոշումը ի կատար ածելու համար: Շինեսախտումների լուծումները տրվում են երկխոսությամբ (հեղինակ-պատվիրատու) կամ ՃԽ-ին կից մասնագիտական խորհրդով (հրավիրված կողմերից-անհատական ֆինանսավորում պատվիրատուի կողմից): Հեղինակի կողմից Հանձման Ակտ (շրջաններում-Գլխավոր Ճարտարապետի հետ միասին) (Բացակայության դեպքում Պետռեգիստում չի գրանցվում):

-Հեղինակային փոքր փոփոխությունները շինարարության ընդացքում չպետք է հակասի հաստատված էսքիզ-նախագծի կոնցեպցիային և Տեխտնտեսական տվյալներին: Էտապները համարվում են ավարտված, եթե կատարված են բոլոր անհատական և պետական մուծումները ըստ պայմանագրերի:

6. ՃԽ-ը 500 մք-ից ավելի մակերես ունեցող կառուցվող օբյեկտների (ռեկոնստրուկցիա) մրցոյթների կազմակերպում

-ՃԽ-ում, մրցոյթային գրասենյակով (գրասենյակը պիտի ունենա տիպային ձևեր, ճկուն աշխատածն – ԻՆԵՏ կայք) (Նախաձեռնողը կնքում է տիպային պայմանագիր ՃԽ-ի մրցոյթային Գրասենյակի հետ) (մրցոյթը կազմակերպվում է 2 կամ 3 էտապով-1 էտապը էսքիզային (ընտրությունը-ճարտարապետների կողմից ընհանուր գնահատում-ռեյտինգային, որոշում)-ճաշխատանք

II փուլ (Ժյուրիի վորոշում) 3 աշխատանք

III փուլ - (հասարակական լսում-Ժյուրիի և պատվիրատուի (1 ձայն) վորոշում-) Ժյուրիի կազմում կարող են ընդգրկվել նույն մասնակիցները: Նախաձեռնողը պայմանագիր է կնքում I տեղը հաղթած Հեղինակի հետ (կամ էսքիզային փուլի, կամ ամբողջ նախագծման)

-Կազմվում է Բուկլետ տեխ տվյալներով-ընտրած տարբերակի սեփականության իրավունքի ֆիքսում (3 մասնակիցներին)-(անհրաժեշտության դեպքում Լիցենզավորում առաջին տեղի Հեղինակին) (II փուլը ՃԽ-ի որոշմամբ կարող է չանցկացվել):

- Էսքիզային փուլի արժեքը պետք է կազմի ընդհանուր նախագծման արժեքի 30-40% +18% ԱԱՀ (փոխանցվում է երկու փուլով) (հաշվարկային ստանդարտից ոչ պակաս 10%): մրցոյթային Փուլերի մրցանակային բաշխումը պետք է կազմի ՃԽ-ն ըստ իր հայեցողության (հանած 30% էսքիզային էտապի արժեքից և ժյուրիի ֆիքսված վճարից-(10%ՃԽ+2%ՃՄ+18%ԱԱՀ)):

-Աշխատանքային նախագիծը կարող է կատարել լիցենզավորված յուրաքանչյուր կազմակերպություն (առաջնահերթությունը տրվում է նախաձեռնողին-շտամպում-նախաձեռնող, երկրորդը-հեղինակին-շտամպում-հեղինակ ճարտարապետ, տիպային պայմանագրի հիման վրա): Աշխատանքային նախագծումը իրականացնող այլ կազմակերպություն պարտավոր է շտամպում ընդգրկել Հեղինակի անունը ու ստորագրությունը ստուգման, համաձայնության կարգով (առանց Հեղինակի ստորագրության շիննախագիծը ուժի մեջ չէ):

- Աշխատանքային նախագծման փուլի արժեքը պետք է կազմի ընդհանուր նախագծման արժեքի 60-70%:

-Նախագծի լիարժեք կատարման պատասխանատվությունը դրվում է նախաձեռնողի վրա:

-Նախագծի էքսպերտիզա կարող է կատարվել ՃԽ-ին կից կազմակերպությունը (վերջինս կարող է պատվիել նաև անհատ կազմակերպությանը):

-Էքսպերտ կազմակերպության որոշման Հիման վրա (տվյալ դեպքում ՃԽ-ին կից էքսպերտիզա) ՃԽ-ը տալիս է Շինարարության Թույլատվություն:

- Հեղինակային Իրավունքի Իրականացումը Պատկանում է Միայն Հեղինակին կամ նրա կողմից նշանակված անձին (կամ անձերին-տարբեր մասնագիտությունների) (ըստ ժամերի կամ ամսավճարի), միակողմանի կամ պայմանագրով պատվիրատուի հետ: Երկու դեպքում էլ Հեղինակը դիմումի հիման վրա, ներկայացված ՃԽ, կարող է կանգնեցնել շինարարությունը: ՃԽ-ի հաստատված որոշումը Հիմք է դիմելու ոստիկանության կարգապահ մարմիններին, որոշումը ի կատար ածելու համար:

-Շինեսախտումների լուծումները տրվում են երկխոսությամբ (հեղինակ-պատվիրատու) կամ ՃԽ-ին կից մասնագիտական խորհրդով (հրավիրված կողմերը վարձատրվում են-պատվիրատուի կողմից): Տուգանքի չափը, նախագծում և շինարարությունում ինքնուրույն փոփոխության պատճառով, պատվիրատուին նշանակում է ՃԽ-ը երկրաչափական պրոգրեսիայով:

-Հեղինակի կողմից Հանձման Ակտ (շրջաններում – Գլխավոր Ճարտարապետի հետ միասին) (Բացակայության դեպքում Պետոեզիստում չի գրանցվում)

- Հեղինակային փոքր փոփոխությունները շինարարության ընդացքում չպետք է հակասի հաստատված նախագծի կոնցեպցիային և Տեխտնտեսական տվյալներին: Էտապները համարվում են ավարտված, եթե կատարված են բոլոր անհատական և պետական մուծումները ըստ պայմանագրերի:

7. ՃԽ-ի որոշումը-Շինարարության թույլատվություն և դադարեցման իրավասություն

- Տուգանքի չափը պատվիրատուին նշանակում է ՃԽ-ը, երկրաչափական պրոգրեսիայով:

- Էքսպերտ կազմակերպության որոշման Հիման վրա ՃԽ-ը տալիս է Շինարարության Թույլատվություն, եթե կատարված են նախագծման բոլոր վճարումները:

- Հեղինակը իր դիմումի հիման վրա, ներկայացված ճխ, կարող է կանգնեցնել շինարարությունը կամ շինարարության մասնավոր հատվածը: Ճխ-ի հաստատված որոշումը Հիմք է դիմելու ոստիկանության կարգապահ մարմիններին, օրենքով ընդունված կարգով, որոշումը ի կատար ածելու համար: Շինխախտումների լուծումները տրվում են երկխոսությամբ (հեղինակ-պատվիրատու) կամ Ճխ-ին կից մասնագիտական խորհրդով (հրավիրված կողմերից-անհատական ֆինանսավորում պատվիրատուի կողմից):

Գլուխ III

Հայաստանի Ճարտարապետների Միության (ստորն ՀՃՄ-ՊրոֆՄիություն) գործունեության ոլորտ

-ՃՄ-ն հիմնական գործունեությունը կայանում է ճարտարապետների ստեղծագործությունների և աշխատանքային իրավունքների պաշտպանությունը:

-ՃՄ-ը շահ չհետապնդող կազմակերպություն է: ՃՄ-նր անդամների օրինական ներկայացուցիչն է բոլոր ատյաններում և կարող է հաղես գալ անդամի կամ անդամների անունից:

-կազմը- նախագահ – ռեյտինգային եղանակով ընտրված (մեկ ամսվա ընդացքում) փակ քվեարկությամբ բոլոր (առայժմ) դիպլոմավոր ճարտարապետների կողմից (ԻՆԵՏկայքով նույնպես), -չափանիշը-կազմակերպչական բարցր ցուցանիշներ-4 տարի ժամկետով (անդամների ընդհանուր քանակի $\frac{1}{4}$ -ի ստորագրահավաքի շնորհիվ նախագահի նոր ընտրությունների անցկացում)-ֆինանսավորման բաց համակարգով (կայքով)

-Ազատված աշխատակիցներին նշանակում է ՃՄ նախագահը (փոխնախագահ+2 + հաշվապահ+իրավաբան): ՃՄ նախագահը և ազատված անդամները չեն կարող աշխատել Ճխ-ի համակարգում:

-Ամեն մի դիպլոմավոր Հայ ճարտարապետ կարող է անդամակցվել ՀՃՄ-ը

-Դիմումների ընդունում - Հարցումների, դատական Հարցումների ներկայացում Ճխ և այլ ատյաններ

- Ճարտարապետական նախապատրաստական դպրոցի (կամ դպրոցների) լավագույն շրջանավարտների հովանավորչություն,որի առկայությունը առավելություն է տալիս ԲՈՒՀ ընդունվելուն

-Ցուցահանդեսների, քննարկումների և այլն, կազմակերպում

- ՃՄ Անդամների Հավաքների կազմակերպում - քննարկում

-ՃՄ-անդամների (անդամների և նրանց երեխաների հանգիստի կազմակերպում, թոշակառուների ամենամսյա օգնություն, հիվանդության դեպում միանվագ օգնություն....և այլն)

ՃՄ ֆինանսային գործունեության շրջանակ

- Ամեն նախագծից 2% մուտք


-փողեր շրջանառելու իրավասություն ֆոնդի մինչև 20%ի չափով

- փոխօգնության դրամարկղի կազմակերպում -անդամավճար ամսեկան 1000 դրամ (սիմվոլիկ)


-անհատական ներդրումների հնարավորություն անդամների կողմից (դատական գործընթացի, ցուցահանդեսի և այլն-նպատակային)

-ողջ ֆինանսական գործնթացը-թափանցիկ առցանց, գրանցված (ըստ դիպլոմի համարանիշի) անդամների համար, նամակագրման և քննարկումների հնարավորությամբ:


ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՏԵԼԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԽԵՄԱ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՏԵԼԱԿԱՐԳԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԽԵՄԱ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԱՅԺՄՅԱՆ ՄԽԵՄԱ



Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառի մասին

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱՔԾԻ ԷՍՔԻԶ(կարճ)

Նպատակը


“Մեր փոքր հողակտոր Հայրենիքում ամեն մի կառույց պիտի ունենա գեղարվեստական արժեք:”
(մեջբերում Ռ.Իսրայելյանից):

-Ապագա ճարտարապետների սերունդներին թողնել այսպիսի մասնագիտական օրինավոր դաշտ, որտեղ բնատուր, շնորհալի մասնագետերը իրենց ներուժը կծառայեցնեն Հայրենիքի ծաղկմանը:


Լուծում

-Քաղաքաշինական ու ճարտարապետական ոլորտը Պետական հսկողությունից մասամբ տարանջատելի կազմում ունենալով ճատարապետական Խորհրդի կողմից առաջադրված թեկնածու:Ոլորտի Պատասխանատվությունը դնել Ռեյտինգային ընտրությամբ ձևավորված ճատարապետական Խորհրդի վրա(հղում –օրինագծի էսքիզ): Ճարտարապետների միության (այժմ-պալատ)գործունեությունը վերականգնել ,որպես Պրոֆմիություն` պաշպան ստեղծագործության և մասնագետների իրավունքների(ՃԽ-ի վերահսկող մարմին): (հղում –օրինագծի էսքիզ)

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՑԵԼԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԽԵՄԱ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՏԵԼԱԿԱՐԳԻ ԱՅԺՄՅԱՆ ՄԽԵՄԱ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՏԵԼԱԿԱՐԳԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԽԵՄԱ

